ՎԱՉՐԻԿ ԲԱՉԻԼ
փիլիսոփայութեան դոկտոր
Միւնխենի համալսարան

ՄՈՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ «ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»-ՈՒՄ

ա. Յիշողութեան ցանց. *Յիշողութիւնը քրիստոնէական վարդապետութեան առանցքային ըմբռնումներից մէկն է՝ ոչ զուտ իբրեւ տրուած իրականութիւն կամ առօրեայ բնական գործողութիւն, այլ, մանաւանդ, իբրեւ պարտք ու պարտականութիւն: Հաւատացեալը պարտ է յիշել Աստծուն, խնդրել Նրան, որ յիշի իրեն («Մինչեւ յե՞րբ, Տէր, մոռանաս զիս ի սպառ... Նայեա եւ լուր ինձ». Սաղ. ԺԲ. 1-4), դիմել Աստուածածնին («Լեր բարեխօս անմոռաց»[1]) եւ բոլոր սրբերին, որ իր համար բարեխօսեն Աստուծոյ առաջ. նա պարտ է խնդրել Տիրոջից, որ յիշի ոչ միայն իրեն, այլ նաեւ ննջեցեալներին («...յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց»[2]):*

Յիշողութիւնը, այսպիսով, ժամերգութեան մէջ կապում է ներկան՝ հաւատացեալի առօրեան, անցեալի՝ սուրբգրային պատմութիւնների եւ անդենականի՝ Աստուծոյ ու հրեշտակների հետ, երկնայինը՝ Աբարիչը, երկրայինի՝ արարածների հետ: Աղօթքը հաւատացեալին յիշեցնում է անդրազանցող մի իրականութիւն, որն իր յարափոփոխ առօրեան ու կեանքը ներաձնացնում եւ իմաստաւորում է: Հաւատքի յիշողութեան պրկումով է, որ մխանում ու ամփոփւում է արդէն իսկ մասնատուած, կոտորակուած եւ յաճախ հակասութիւններ պարունակող կեանքը: Հաւատացեալի համար կեանքի իմաստաւորումը այս միութեան մէջ է՝ աղօթքը իմաստաւորում է կեանքը, կեանքը՝ մեկնաբանում աղօթքը: Նրա յիշո-

[1] **Ներսես Շնորհալի**, Տաղեր եւ գանձեր, Երեւան, 1987, էջ 8:

[2] «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցոյ արարեալ Ս. Սահակայ Հայրապետի եւ Մեսրոպայ Վարդապետի եւ Գիտայ եւ Յովհաննու Մանդակունոյ եւ այլոց վարդապետաց», Վենետիկ, 1898, էջ 708:

ղական ցանցում միանում են ինքը, իր ժամանակակիցները՝ «եղբայրները» քրիստոնէական առումով, ննջեցեալները, երկնային զուարթուններ-ը եւ Աստուած: Իւրաքանչիւրն ունի իր պաշտօնը, որի կատարումը կախեալ է միւս պաշտօնների իրագործումից՝ հաւատացեալը Հայցում է, ննջեցեալները՝ բարեխօսում, Աստուած՝ ներում... Քրիստոնէական վարդապետութեան մէջ յիշողական այս խիտ ցանցի կեդրոնական հանգոյցը Պատարագն է՝ իբրեւ յիշատակի արարողութիւն՝ «...զայս արասջիք առ իմոյ յիշատակի» (Ղուկ. ԻԲ. 19), որի ընթացքին յիշողութիւնը վերածւում է կենդանի վկայութեան:

Որքան գրական է յիշողութիւնը, նոյնքան ժխտական է մոռացութիւնը, որը, սակայն, պէտք չէ շփոթել մոռացկոտութեան հետ: Եթէ մոռացկոտութիւնը վերաբերում է առաւել հոգեբանութեանն ու նեարդաբանութեանը, անուններին կամ թուերին, մտային դեղեւկոտութեանը, անուշադրութեանը կամ ցրուածութեանը, մոռացութիւնը գոյութենական, աւելի սեղմ առումով՝ փրկագործական իմաստ ունի: Այս ուղղութեամբ բազմաթիւ են Աստուածաշնչի յղումները՝ ով Աստծուն մոռանայ, կը մատնուի կորստեան՝ «Դարձին մեղաւորք անդրէն ի դժոխս, եւ ամենայն հեթանոսք որ մոռացան զԱստուած» (Սաղմ. Ի. 18): Աստուծոյ ժողովուրդը մոռացել է իր Տիրոջը՝ «Արդ ընդէ՞ր խօսիք ընդ իս. զի ամենեքեան դուք ամպարշտեցայք, եւ ամենեքեան դուք անօրինեցայք յիս... ժողովուրդ իմ մոռացաւ զիս զաւուրս անթիւս» (Երեմ. Բ. 29 եւ 32): Ով Աստծուն մոռանայ, անհաւատարիմ է՝ «Բայց որպէս անգոսնէ կին զամուսին իւր, այնպէս անգոսնէ զիս տունդ Իսրայելի, ասէ Տէր... զի անիրաւեցան ի ճանապարհս իւրեանց եւ մոռացան զԱստուած Սուրբն իւրեանց» (Երեմ. Գ. 20-21): Երկնային Հօրը մոռանալը պատժաբեր է՝ «Եւ ցրուեցից զնոսա իբրեւ զխռիւ հողմակոծեալ յանապատի: Այդ է վիճակ քո եւ մասն՝ չհաւանելդ ձեզ ինձ. զի մոռացար զիս եւ յուսացար ի ստութիւնս» (Երեմ. ԺԳ. 24-25): Աստուած փոխադարձաբար չի մոռանում իրեն հաւատարիմ մնացողներին՝ «Ոչ թէ անիրաւ ինչ է Աստուած մոռանալ զգործս ձեր եւ զսէրն, զոր ցուցէք յանուն նորա, զի պաշտէիք զսուրբսն եւ պաշտէք» (Եբր. Զ. 10): Աստուած, իր ժողովրդի հետ կապելով Նոր Ուխտը, հաստատում է նաեւ իր հաւատարմութիւնը, որը ինքնին բացառում է մոռացութիւնը (հմմտ. Եբր. Ը. 9-12): Հաւատարիմ է նա, ով յիշում է Նրան. «մոռանալու» ժխտական բնոյթը բացայայտւում է նաեւ բառի արմատական իմաստում՝ «մեռանել»[3]:

[3] Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. Գ., Երեւան, 1977, էջ 346:

Ներսէս Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ»-ը մոռացութեան ներհակ աղօթք է: Վերնագիրն արդէն հակամոռացական է, որովհետեւ «հաւատքով» խոստովանում է նա, ով յիշում է իր հաւատքը, եւ հաւատով «խոստովանում» է նա, ով յիշում է խոստովանելիքը: Այս երկի բովանդակութիւնը հիմնուած է հետեւեալ եռայօդ կառոյցի վրայ՝

ա. Աղօթարարը յիշում է քրիստոնէական վարդապետութիւնը.

բ. Յիշում է ինքն իրեն՝ իր մտածածը, ասածն ու արածը.

գ. Յիշում է Աստծուն, ում առջեւ խոստովանում է:

Որտե՞ղ է, ուրեմն, Ներսէս Շնորհալին զետեղում մոռացութիւնը եւ ինչպէ՞ս է բացատրում նրա անհրաժեշտութիւնը: Այս հարցը քննարկելուց առաջ կարեւոր է նաեւ անդրադառնալ «Հաւատով խոստովանիմ»-ի շրջածիրին, որը նմանապէս բովանդակում է յիշողական երկու տարողութիւններ՝ պահպանութիւն եւ կրկնութիւն:

բ. Պահպանութիւն. *«Հաւատով խոստովանիմ»-ը «Հանգստեան ժամ»-ի վերջին մեծ աղօթքն է*[4]*, որին նախորդում են Գրիգոր Նարեկացիի «Ընկալ քաղցրութեամբ»-ը*[5] *եւ «Որդի Աստուծոյ»-ը*[6]*: «Հանգստեան ժամ»-ը, ինչպէս ժամակարգութեան մէջ է գրուած, «կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, զի պահպանողական աջով Միածնին պահեսցէ զմեզ ի խաւարային գիշերիս»*[7]*: Վերնագրային այս բացատրութեամբ ընդլայնւում է յիշողութեան իմաստը, որովհետեւ Հանգստեան ժամին ոչ միայն հաւատացեալ անձն է հաւատքով «խոստովանում» եւ խոստովանութեամբ յիշում, այլ նաեւ Աստուած է, որ «պահպանում» է, պահպանելով՝ յիշում վերջինիս: Այլ կերպ ասած՝ այս աղօթքում հաւատացեալը, յիշելով Աստծուն, խնդրում է, որ Նա չմոռանայ եւ պահպանի իրեն «ի խաւարային գիշերիս», «յերկիւղական գիշերիս» կամ «ի դիւական խռովութենէ»*[8]*:*

Հաւատարիմ քրիստոնէական մտածողութեանը՝ Ներսէս Շնորհալիի համար խաւարը կամ գիշերը փորձութեան ժամանակն է, երբ մարդը կարող է իր փրկագործող յիշողութիւնը կորսնցնի եւ կորստի մատնուի: Աստուած է, որ Իր աջով պահպանում է մարդուն, պահպանելով՝ յիշում

---

[4] «Կարգաւորութիւն հաւատակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցոյ արարեալ Ս. Սահակայ Հայրապետի եւ Մեսրոպայ Վարդապետի եւ Գիւտայ եւ Յովհաննու Մանդակունոյ եւ այլոց վարդապետաց», էջ 259:

[5] Անդ, էջ 257:

[6] Անդ, էջ 258:

[7] Անդ, էջ 250:

[8] Անդ, էջ 255:

նրան եւ յիշելով՝ զերծ պահում մոռացութեան վտանգից: Հանգստեան ժամի առաջին «Քարոզ»-ը յստակեցնում է այս «պահպանութեան» իմաստը: Պահպանել նշանակում է «ամբողջ» պահել «զհոգի եւ զմարմին մեր»[9] ողջ եւ կատարեալ: Իսկ «Քարոզ»-ին յաջորդող «Աղօթք»-ը բացայայտում է ամբողջութեան եւ ողջութեան նախապայմանները՝ խաղաղութիւն եւ երկիւղ («...պահեա զմեզ խաղաղութեամբ...» եւ «բեւեռեալ պահեա զմիտս եւ զխորհուրդս մեր... ընդ սուրբ երկիւղ Քո»[10]: Հաւատացեալը հանգստեան ժամին իրեն յանձնում է Աստուծոյ խնամատարութեանը՝ վստահութեամբ ու յոյսով, ինպէս Ներսէս Շնորհալին է ասում՝ «...քեզ յանձն առնեմ զանձն իմ», կամ «Մաղթանք»-ը՝ «Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ» եւ «...յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր»[11]: Մարդու յիշողութիւնը կամ յիշողութեան կայունութիւնը, ուրեմն, ոչ թէ իր ճիգի արդիւնքն է, այլ՝ Աստուծոյ շնորհը:

Եթէ Աստուած չպահպանի մարդուն, նա կը մահանայ՝ թէ՛ մարմնապէս եւ թէ՛ մեղքին զոհ դառնալու իմաստով: «Չպահպանել» նշանակում է, որ Աստուած մոռացել է մարդուն: Ըստ «Հաւատով խոստովանիմ»-ի «մ» տան՝ Ներսէս Շնորհալին «մահանալը» ընութագրում է, ինչպէս պարագան է նաեւ աշխարհաբարում, իբրեւ «հոգին աւանդել»: Իսկ ո՞վ է ստանում այդ «աւանդը», եթէ ոչ նոյն ինքն Աստուած, Ով այդ աւանդը Իր յիշողութեան մէջ է պահում: Իսկ եթէ Տէրը մոռանայ այդ «աւանդը», մարդը դմեռնի: Այս առումով դժոխքը այլ բան չէ, եթէ ոչ Աստուծոյ մոռացութիւնը՝ աւանդամոռացութիւնը (հմմտ. Սաղմ. ԺԳ. 2): Դժոխքում է նա, ում Աստուած մոռացել է. մարմնապէս մահացածները դեռեւս վերջնականապէս չեն մեռել, այլ միայն «հանգչում» են, «ննջում»՝ «...հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո» («յ» տուն)՝ յուսալով Աստուծոյ յիշողութիւնն ու ողորմութիւնը վերջին դատաստանի ժամանակ:

գ. Կրկնութիւն. *«Ժամակարգութիւնը», իբրեւ ժամի կարգաւորում եւ ծիսական միաւոր, կիրառում է կրկնութիւնը: Ամէն օր՝ նախատեսուած ժամերին եւ վայրում, հաւատացեալները աղօթում են՝ արտաբերելով տվյալ ժամերի համար նախատեսուած որոշակի աղօթքներ: Օրուայ այս «կշռոյթ»-ը, որը զետեղուած է ամսուայ ու տարուայ կշռոյթում՝ ամ-*

[9] Անդ:
[10] Անդ:
[11] Անդ:

բագրուած օրացոյցում[12], *հիմնուած է կրկնութեան վրայ*[13]: *Իսկ կրկնութիւնը կամ, աւելի ճիշտ, կշռոյթային, ոչ պատեհական կրկնութիւնը, յիշելու եւ յիշողութեան մէջ բովանդակութիւններ սեւեռելու միջոց է՝ սովորելու, բայց ոչ, այսպէս ասած, «անգիր» անելու համար: Ներսէս Շնորհալիի երկում յիշելու հետեւանքը ոչ թէ զուտ յիշողութիւնն է, այլ՝ գործողութիւնը եւ մարդու վարքը: Ուստի, «թ» տունը յատկացուած է զգայարաններին եւ դրանց գործողութիւններին՝ տեսնելուն, լսելուն, խօսելուն, գործելուն եւ զգալուն: Յիշողութիւնը ուղեղում խայտաբղէտ կեանք «վայելող» զանգուած չէ, այլ պէտք է հանգի աստուածահաճոյ կենցաղավարման:*

Կրկնութիւն ասելով՝ կարելի է հասկանալ թէ՛ երկում կրկնուածը եւ թէ՛ երկը՝ իբրեւ կրկնուած: Ոչ միայն «Հաւատով խոստովանիմ»-ը ունի կշռոյթաւոր կրկնութիւններ, ինչպէս, օրինակ, բառային՝ «...ողորմեա Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս», կառոյցային՝ տների սկզբները, կամ բովանդակային՝ «...մտօք... հոգւով եւ մարմնով... խորհրդով, բանիւ եւ գործով... խորհել եւ խօսել եւ գործել», այլ «Հանգստեան ժամ»-ի մաս լինելով՝ այս աղօթքը ինքնին կրկնական է, հաւատացեալն ամէն օր կրկնում է այն եւ կրկնելով՝ ներառում տարբերը՝ իր առօրեան, որը երբէք նոյնը չէ, սակայն ամփոփւում եւ իմաստաւորւում է կրկնուածով: Կրկնութիւնը իմաստաւորման եղանակ է, որի վրայ հիմնւում է փրկագործական յիշողութիւնը[14]:

Որտե՞ղ է, ուրեմն, մոռացութեան արժէքը: Ներսէս Շնորհալիի երկի համապատասխան երկու տներն են «զ» եւ «ը»՝ «Անեղ բնութիւն, մեղայ Քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ Քում սրբոյ. եւ ողորմեա Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ եւ գոր-

---

[12] Այստեղ երեւում է նաեւ «օրացոյցի» եւ «հաւատական յիշողութեան» միջեւ եղած կապը, «օրացոյցի» բաղադրական ոյժը, որովհետեւ հաւատական յիշողութիւնն առնչւում է նաեւ «հաւատական ինքնութեան» հետ՝ անկախ այն հարցից, թէ, ինչ է նշանակում «հաւատական ինքնութիւն»: Սակայն այս ինքնութիւնը վերաբերում է ոչ միայն «ազգերին» կամ «ժողովուրդներին», այլ նաեւ Եկեղեցուն՝ իբրեւ քրիստոնեաների հաւատակատութեան:

[13] Հմմտ. Գ. **Պրլտեան,** Գրիգոր Նարեկացին լեզուի սահմաններուն մէջ, Վենետիկ, 1985, էջ 31-35:

[14] Այստեղ կարելի է հարցնել՝ արդեօք աղօթքը՝ իբրեւ հայցում, հոետորական ճառի հետ կապ ունի. չէ՞ որ աղօթքը աղաչանք, խնդրանք է Աստծուն: Այս պարագային կրկնութիւնը երկու ուղղութիւն կ՚ունենայ՝ դէպի Աստուած՝ խնդրանքի եւ դէպի աղօթարարը՝ յիշեցման միտումով:

ծով. Ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա զանուն իմ ի գպրութեան կենաց. եւ ողորմեա Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս»:

դ. Ջնջում. *«Մի՛ յիշեր»-ը Ներսէս Շնորհալին մեկնում է իբրեւ «ջնջեա»՝ «յանցանաց» ջնջում: «Յանցանքը» անցում է, զանցում՝ պատուիրանի եւ օրէնքի, սահմանի խախտում. եւ «Անեղ բնութիւնն» է կամ, ինչպէս «ա» տան մէջ ենք կարդում, Սուրբ Երրորդութիւնը, որ պիտի չյիշի հաւատացեալի մեղքերը*[15]*: Մոռանալու ըմբռնումը՝ իբրեւ ջնջում, հին ծագում ունի եւ հասնում է մինչեւ Պղատոն*[16]*: Մոմէ տախտակի վրայ գրելը, ապա տախտակի մակերեսը հարթելը, այսպիսով, տախտակը tabula rasa-ի վերածելով՝ յաջորդ օգտագործման համար պատրաստելը, մոռացութեան տարածուած այլաբանութիւններից է: Այս ջնջումն սկսում է առօրեայում՝ հրով ու ջրով:*

Հրով մաքրուելու մասին Ներսէս Շնորհալին խօսում է «ժ» տան մէջ: Հուրը Քրիստոսի սէրն է, որը պիտի այրի աղտը, սրբի խիղճը, մաքրի մեղքը եւ վառի գիտութեան լոյսը: Այս հուրը այն բաղձալի կրակն է, որ եթէ անձը «չբորբոքի» («ժ» տուն), ապա վերջին դատաստանի ժամանակ կը դատապարտուի «յաւիտենական հրոյն» («ն» տուն): Եւ եթէ սիրոյ կրակը ջնջում եւ մոռացնում է մեղքը, յաւիտենական հուրը ջնջում եւ մոռացնում է անձին ամբողջութեամբ:

Ջուրը յատնւում է իբրեւ «արտասուք» «ղ» տան մէջ: Այն «ապաշխարութեան» արտասուք է, որը անձի մեղքն է լւանում, երբ նա ապաշխարում, այսինքն՝ աշխարհից հրաժարւում է: Ներսէս Շնորհալին այս մասին գրում է նաեւ «Առաւօտ լուսոյ»-ում. «Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ արտօսր, ջնջել ըզյանցանս»: Ջուրը, իբրեւ մոռացութեան խորհրդանիշ, եւս վաղեմի ակունքներ ունի: Ըստ յունական դիցաբա-

[15] Առաջին տան մէջ Ներսէս Շնորհալին պարարտագործութեան մասին խօսում է Նոր եւ ոչ թէ Հին Կտակարանի տեսանկիւնից, քանի որ պարարտագործութիւնը վերագրում է Սուրբ Երրորդութեանը եւ ոչ միայն Երրորդութեան առաջին դէմքին՝ ինչպէս է Հին Կտակարանում: Ուշագրաւ է նաեւ, որ երբ խօսում է Սուրբ Երրորդութեան մասին, առաջին երկու տները աւարտում են այս նախադասութիւններով՝ «ողորմեա Քո արարածոց» («ա» տուն) եւ «...ողորմեա ինձ բազմամեղիս» («ր» տուն). յաջորդ բոլոր տները, բացի վերջինից, որոնք սկսում են աստուածային զանազան յատկութիւնների նկարագրութեամբ, աւարտում են երկու «ողորմեանների» շաղկապումով՝ «...ողորմեա Քո արարածոց եւ ինձ բազմամեղիս»: Սա, հատանարար, ցոյց է տալիս, թէ ինչ կարեւոր նշանակութիւն ունի Սուրբ Երրորդութեան խորհուրդը Ներսէս Շնորհալիի համար, եւ այդ պատճառով էլ միս բոլոր տների հաւաքական Սուրբ Երրորդութիւնն է: «Ջ» տան մէջ, որ սատ է, «մի՛ յիշեր», հաւաքական կրկին եւ բացառարար Սուրբ Երրորդութիւն է, որովհետեւ «Անեղ բնութիւն»-ը Նրա բնորոշումն է, ինչպէս «ա» տան մէջ՝ «անեղ եւ անմահ բնութիւն»-ը:

[16] H. Weinrich, Lethe: Kunst und Kritik des Vergessens, München, 2005, S. 17.

նութեան՝ Լեթէն մոռացութեան աստուածուհին է, մինչ Մնէմոզինը՝ յիշողութեան եւ մուսաների մայրը: Սակայն աստուածութիւններ լինելուց բացի, երկուսն էլ ստորերկրեայ գետերի անուններ են: Մահացածների հոգիները խմում են Լեթէի ջրից, որպէսզի իրենց երկրաւոր կեանքը մոռանան, անդենական աշխարհ անցնեն եւ նոր մարմնով կարողանան վերածնուել ու աշխարհ վերադառնալ[17]*: Ջուրն այս դերն ունի նաեւ մկրտութեան ժամանակ՝ նախնական մեղքը մաքրւում է, եւ «հին Ադամը» վերածւում՝ «նոր Ադամի»: Ծննդեան տաղերից մէկում Ներսէս Շնորհալին դիմում է մի ծայրագոյն յարակարծութեան՝ կիզող ջրին՝ «Եկեալ հուրն Աստուած Յորդանանու յորձանսն իջեալ, ջրով կիզու զմեղս ադամային բնութեան մարդկան»*[18]*: Ջուրը նորոգման ակունք է, ինչպիսին էր նաեւ ջրհեղեղի եւ Նոյան տապանով սկսած նոր կեանքի պարագային:*

ե. Դպրութիւն. *«Է» տան մէջ ջնջումը առնչւում է յանցանքների ձեռագրին: Ամէն անցում եւ պատուիրանի զանցում ձեռագրուած է, եւ «տեսող ամենայնին» նկատում է մեղաւորի այդ «ձեռագիրը», որն ընդգրկում է վերջինիս խորհածը, ասածն ու արածը: Տեսողութիւնն ու յիշողութիւնը կապուած են իրար, ինչպէս ջնջումը եւ ջնջումից սերող ան-տեսութիւնը՝ մոռացութեան հետ: Եթէ ջնջումը մոռացութիւն է, ապա գրելը՝ յիշողութիւն: Նոյն տան մէջ կարդում ենք՝ «...գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց»*[19]*:*

Կեանքի գիրքը նախ եւ առաջ վերջին դատաստանի համար է կազմուած՝ «...ատեան նստաւ եւ դպրութիւնք բացան...» (Դան. է. 10): Իւրաքանչիւր հաւատացեալ ցանկանում է, որ իր անունը գրուի կեանքի գրքում, նմանապէս՝ Ներսէս Շնորհալին: Ընտրեալներն են, որոնց անունները կեանքի գրքում են գրւում՝ «...եւ անսաց Տէր, եւ լուաւ եւ

[17] Անդ, էջ 18: Վիրգիլիոսի «Էնէական»-ում կարդում ենք՝ «Այն ատեն հայրն Անքիսէս. «Այն հոգիները, որոնք պիտի ճակատագրին միջոցաւ դառնան ուրիշ մարմիններու, կը խմեն Լեթէ գետին ջուրերուն հետ հեզանազ անցեալ բոլոր իրերուն խոր մոռացմունքն» (**Վիրգիլիոս,** Էնէական, բնագրէն աշխարհ. թարգմ.՝ Հ. Արսէն Ղազիկեան Մխիթարեանց, 2-րդ հրատ., Վենետիկ, 1933, էջ 257):

[18] **Ներսէս Շնորհալի,** Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 406:

[19] Ի տարբերութիւն Պղատոնի, որ «Փեդրոս» երկում (274d-275a) անդրադառնալով եգիպտական մի առասպելի, քննադատում է գրերի գիւտը, քանզի գրերն աւելի մոռացութեանն են նպաստում, քան յիշողութեանը, չէ՞ որ մարդն սկսում է յիշողութիւնը վստահել իրենից դուրս գտնուող նշաններին, Սուրբ Գիրքը յիշողութիւնը հիմնում է գրերի վրայ: Արդեօք այս «գրերը» և Ներսէս Շնորհալիի նշած «ձեռագիրը» պղատոնեան այբուբենի հետ կապ ունեն՝ ուրիշ հարց է:

գրեաց գիր յիշատակի առաջի երկիւղածաց Տեառն, եւ որոց սարսեն յանուանէ Նորա» (Մաղ. Բ. 16): «Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի սպիտակս, եւ ոչ ջնջեսցի անուն նորա ի դպրութենէն կենաց. եւ խոստովանեցայց զանուն նորա առաջի Հօր իմոյ եւ առաջի հրեշտակաց» (Յայտ. Գ. 5): Սաղմոսերգուն խնդրում է Աստծուց ջնջել իր թշնամիների անունները կեանքի գրքից՝ «Դիր զմեղս ի վերայ մեղաց նոցա, զի մի մտցեն յարդարութիւն Քո: Ջնջեսցին նոքա ի դպրութենէ քումմէ կենաց, եւ ընդ արդարս Քո մի՛ գրեսցէ» (Սաղմ. ԿՀ. 28-29): Կեանքի գրքից բացի, որտեղ անուններն են գրուած, Աստուած Իր օրէնքը գրում է նաեւ մարդկանց սրտերում (Հմմտ. Երեմ. ԼԱ. 33): Այս օրէնքի զանցումն է յանցանքը, որ ձեռագրւում է դատաստանի գրքում:

զ. **Անուն.** *«Զ» եւ «է» տների միջեւ կայ մի այլ զուգահեռութիւն՝ «անուն»-ը: Առաջին տան մէջ՝ «մի՛ յիշեր... վասն անուանդ Քում», իսկ յաջորդում՝ «...գրեա զանուն իմ»: Ըստ այս աղօթքի՝ Աստուած յանուն Իրեն պէտք է մոռանայ հաւատացեալի մեղքերը, սակայն պիտի յիշի վերջինիս անունը կեանքի գրքում: Յաւիտենական կեանքի համար, ուրեմն, անհրաժեշտ են թէ՛ անուան յիշատակութիւնը եւ թէ՛ յանցանքի մոռացութիւնը՝ ջնջումը, անտեսանելի դառնալը:*

Հարցն այստեղ Աստուծոյ տարբեր «անուանումները» չեն՝ «Տէր», «Հայր» կամ «է», այլ Նրա՝ կոչելի լինելը, Նրան դիմելու կարելիութիւնը, Նրա հետ յարաբերութիւն ձեւավորելու նախապայմանը[20]: Անունը ինքնութեան ցուցանիչն է: «Վասն անուանդ» նշանակում է՝ ինքդ քեզ համապատասխանելով կամ ինքդ քեզ յիշելով՝ ըստ քո էութեան ու ինքնութեան: Սակայն եթէ Աստուած, Ինքն իրեն յիշելով, պիտի մոռանայ մեր յանցանքներն ու թողութիւն շնորհի հաւատացեալին, ապա որտե՞ղ է մնում Նրա ազատութիւնը. արդեո՞ք թողութիւն շնորհելը անհրաժեշտութիւն է Աստուծոյ համար:

«Հաւատով խոստովանիմ»-ի տներն սկսւում են Աստուծոյ նկարագրութեամբ՝ «իմաստութիւն Հօր», «կամեցող բարեաց», «արքայ երկնաւոր» եւ այլն: Այս նկարագրութեան կարեւոր մասն են՝ «դատաւոր արդար» եւ «ամէնողորմ Տէր» բնորոշումները: Ամէնողորմ ու արդար լինելը երաշխաւորում են Աստուծոյ ազատութիւնը՝ հաւատացեալին եւս տալով ազատութիւն, այսինքն՝ իր արարքների համար պատասխանատուութիւն ստանձնելու կարելիութիւն: Եթէ Աստուած ազատ է եւ կարող

[20] Հմմտ. Ratzinger Joseph Benedikt XVI, Jesus von Nazareth, Erster Teil: Von der Taufe im Jordan bis zur Verklärung, Freiburg i. B., 2007, էջ 177:

է մարդկանց դատապարտել, ազատ է նաեւ մարդը՝ ընտրելու իր կեանքի ճանապարհը: Այնուամենայնիւ, հաւատացեալը գիտի, որ սիրոյ հրի եւ ապաշխարութեան արտասուքի արգասիքը ոչ թէ իր արժանիքն է, այլ՝ Աստուծոյ շնորհը:

Այսպէս՝ եթէ անունը ինքնութիւն է, եւ Աստուած, յիշելով Իրեն («վասն անուանդ Քում»), այսինքն՝ Իր անունը, յիշում է մեզ՝ մեր անունը, ուրեմն, յանցանքը կամ մեղքը հաւատացեալի ինքնութեան հետ միաձուլուած չէ, այլապէս մոռանալով մեղքը՝ Աստուած կը մոռանար հաւատացեալի անունը, որը կը նշանակէր մահ: Պարագան այստեղ ճիշտ հակառակն է՝ Աստուած, մոռանալով յանցանքը, փրկում է հաւատացեալի «անունը» եւ կեանքը: Այս առընչութեամբ «ն» տան մէջ կարդում ենք՝ «...այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, եւ լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ»: Աստուած, փրկելով հաւատացեալի անունը, այն դարձնում է կոչելի: Այնպէս, ինչպէս Ինքը անուն ունի՝ մարդու կողմից կոչելի լինելու համար, նոյնպէս եւ Նրա թողութիւնը փրկում է հաւատացեալի անունն ու նրան դարձնում կոչելի արդարների կողմից՝ դէպի երկնքի արքայութիւն:

Լ. Կենարար մոռացութիւն. *Քրիստոնէութեան մէջ յիշողութիւնը դրական արձագանք ունի, իսկ մոռացութիւնը՝ ժխտական: Յիշողութեան գագաթը Սուրբ Պատարագն է: Սակայն պէտք է յիշել, որ մոռացութիւնը նոյնքան «դրական» տարր է: Եթէ Աստուած մոռանայ հաւատացեալի յանցանքները, նշանակում է՝ թողութիւն է շնորհել: Իսկ եթէ Աստուած յիշի հաւատացեալի մեղքերը, ապա մոռացել է նրա անունը եւ յանձնել նրան գեհենին. դժոխքը Աստուծոյ մոռացութիւնն է: Անունը յիշել, սակայն յանցանքի «ձեռագիրը» ջնջել ու մեղքը մոռանալ՝ սա է Ներսէս Շնորհալիի համար Աստուծոյ կենարար մոռացութիւնը:*

РЕЗЮМЕ

Память является одним из основных положений христианского вероучения, причем не только как данная реальность или обыденное естественное действие, а в первую очередь, как долг и обязанность. Насколько положительна память, настолько же отрицательно забвение. “С верою исповедую” Нерсеса Шнорали, анализу которой посвящена данная статья, молитва направлена на отрицание забвения. Уже само заглавие говорит об этом, поскольку “с верою” исповедует тот, кто помнит свою веру, и с верою “исповедует” тот, кто помнит, что он исповедует. В статье автор обращается к вопросу о том, где Нерсес Шнорали помещает забвение

и как объясняет его необходимость. Этот вопрос рассматривается в общей канве "С верою исповедую", которая содержит два элемента памяти - сохранение и повторение.

SUMMARY

Memory is one of the key notions in the Christian doctrine, but not as just given reality or daily usual action, but especially as responsibility and duty. The more positive is the memory, the more negative is oblivion. "I Confess with Faith" by Nerses the Graceful, to the analysis of which is dedicated this article, is a prayer contrary to oblivion. The title itself is already incompatible with oblivion, because the person that confesses with "faith" remembers his/her faith and recalls what he/she should confess. The work reflects on the issue where Nerses the Graceful positions oblivion and how he explains its necessity. This issue is considered within the general framework of "I Confess with Faith" that embraces two recollecting capacities - preservation and repetition.